**ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի շնորհավորական ուղերձը Ուսուցչի օրվա կապակցությամբ**

Հարգարժան ուսուցիչնե՛ր, սրտանց շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա առթիվ:

Այս տոնը ամենասիրված տոներից մեկն է, եւ այն մենք նշում ենք ազգովի: Ուսումնատենչ եւ գիտելիքներով հարուստ մեր ժողովուրդը միշտ էլ առանձնահոտուկ սեր ու հարգանք է տածել դեպի ուսուցիչը, մեծարել նրա առաքելությունն ու շնորհակալ վաստակը: Այդպես է նաեւ այսօր, եւ ամենեւին չի նվազել ձեր հանդեպ ունեցած ակնածանքն ու երախտագիտությունը:

Դո՛ւք, սիրելի ուսուցիչներ, ձեր նվիրված ու հոգատար աշխատանքով մեծապես նպաստում եք մեր հասարակության վաղվա քաղաքացու ձևավորմանը, գիտելիքների հետ մեկտեղ սերմանում հայրենասիրություն, մարդասիրություն, պատասխանատվության գիտակցում ու քաղաքացիական կեցվածք:

Սիրելի ուսուցիչներ, ձեր աշխատանքը ըստ արժանվույն են հատուցում հասարակության բոլոր շերտերը: Երկրի ղեկավարության կողմից արվում է հնարավորինը՝ բարելավելու ձեր գործունեության ու կենսական պայմանները, ինչը կրելու է շարունակական բնույթ:

Կրկին շնորհավորում եմ ձեզ, մաղթում եմ քաջառողջություն, ընտանեկան երջանկություն և արգասաբեր աշխատանք՝ ձեր ազգանպաստ գործում: